Թասիկ

Բնակչություն՝ 274

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 117 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 13 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1740 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Նախկին անվանումներն են Գուղճի, Թազագյուղ, Թազաքենդ, Ղուշճի, Կուշչի, Ղուշչի: Թազագյուղ տարբերակը հիշատակվում է Ղևոնդ Ալիշանի կողմից: Գյուղի բնակիչների նախնիները այստեղ են տեղափոխվել նույն շրջանի Հացավան գյուղից՝ 100-120 տարի առաջ:
Գյուղից հարավ գտնվում են միջին դարերում հայտնի Թանահատ վանքը, Դիքբաշ կողվող սրբատեղին, ավերակ գյուղատեղիներ: Այստեղ է ծնվել դրամատուրգ Անուշավան Վարդանյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 103 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 323 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 255գլուխ,
- խոզեր՝ 40 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 255:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 80 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4051 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3862 հա, որից՝
- վարելահող՝ 383 հա, խոտհարք՝ 184 հա, արոտ՝ 2842 հա, այլ հողատեսք՝ 453 հա
- բնակավայրերի հողեր՝ 60 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 37 հա,
- անտառային հողեր՝ 58 հա, որից անտառածածկ՝ 2 հա
- ջրային հողեր՝ 29 հա